ԿԱՐԾԻՔ

ՄԱՐԻՆԵ ԱՂՎԱՆԻ ՓԻԼԻՊՈՍՅԱՆԻ՝ «ՔԱՂԱՔԱԳԻՏԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ (ԱՆԳԼԵՐԵՆ ՆՅՈՒԹԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ)» ԹԵՄԱՅՈՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ՝ ԺԳ. 00.02 «ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ» /ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՈՒ/ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ

Ներկայումս սովորողների քաղաքագիտական անգլերեն լեզվահաղորդակցական կարողունակության զարգացումը ժամանակի անժխտելի պահանջ է, և այն պետք է իրականացվի համապատասխան մեթոդական համակարգի մշակմամբ և ուսումնական գործընթացում դրա ներդրմամբ, ինչն առավել արագ, դյուրին և արդյունավետ կդարձնի մասնագիտական լեզվի ուսուցման գործընթացը: Մարինե Փիլիպոսյանի հետազոտության թեմայի արդիականությունը պայմանավորված է ՀՀ բուհերում սովորողների քաղաքագիտական անգլերեն լեզվահաղորդակցական կարողունակության զարգացման անհրաժեշտությամբ:

Արժևորելով թեմայի արդիականությունը՝ հետազոտության շրջանակում փորձ է արվել բացահայտել բուհերում քաղաքագիտական անգլերենի ուսուցման գործընթացում սովորողների մասնագիտական լեզվահաղորդակցական կարողությունների տիրապետման առկա դժվարությունները և առաջարկել դրանց հաղթահարման նպատակով գիտագործնականորեն հիմնավորված լուծումներ: Այս համատեքստում ակնհայտ է դառնում քաղաքագիտական անգլերենի ուսուցման մեթոդական համակարգի մշակման և փորձարարական հիմնավորման անհրաժեշտությունը:

Ատենախոսը քաղաքագիտական անգլերենի բնագրային, բառապաշարային և տերմինաբանական լեզվանյութի համակողմանի ուսումնասիրության հիման վրա մշակել է քաղաքագիտական անգլերենի ուսուցման մեթոդական համակարգ, որը

կարող է տեսական հիմք ծառայել հետագա գիտական և մեթոդական հետազոտությունների համար:

Հետազոտության կառուցվածքը և ծավալը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

Ներածության մեջ հստակ սահմանված են հետազոտության նպատակը և խնդիրները: Հեղինակին հաջողվել է օբյեկտիվորեն ձևակերպել հետազոտության գիտական վարկածը, նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, ինչպես նաև պաշտպանության ներկայացված դրույթները:

Ատենախոսության առաջին գլխում՝ **«ՔԱՂԱՔԱԳԻՏԱԿԱՆ ԱՆԳԼԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ»** վերտառությամբ, հեղինակը հիմնավորում է մասնագիտական անգլերենի (ESP) ուսուցման արդիականությունը՝ կենտրոնանալով մասնագիտական հաղորդակցական կարողունակության ձևավորման վրա, ինչը թույլ է տալիս լեզուն կիրառել իրական մասնագիտական համատեքստերում: Կարևորվում է սովորողների թիրախային կարիքների վերլուծությունը և բնագիր նյութերի ու դեպքի ուսումնասիրության մեթոդի կիրառումը, որոնք նպաստում են տեսական գիտելիքը գործնական հմտության վերածելուն: Հեղինակը հստակ սահմանազատում է քաղաքական և քաղաքագիտական խոսույթները. եթե առաջինն ուղղված է ներազդմանը, ապա երկրորդն իրականացնում է քաղաքական գործընթացների գիտական վերլուծությունն ու օբյեկտիվ մեկնաբանումը: Առանձնակի ուշադրության են արժանի քննարկվող խոսութային ռազմավարությունները, ինչպիսիք են շրջանակավորումը, ներառական լեզուն և մեղմասացությունը, որոնք հանդես են գալիս որպես հանրային գիտակցության ձևավորման և մասնագիտական հաղորդակցության արդյունավետության բարձրացման գործիքներ:

Ատենախոսության երկրորդ գլխում՝ **«ՔԱՂԱՔԱԳԻՏԱԿԱՆ ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՎԱՆՅՈՒԹԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ»** վերտառությամբ, հեղինակը ներկայացնում է մասնագիտական լեզվանյութի ընտրության և յուրացման գիտականորեն հիմնավորված մեթոդաբանությունը:

Ատենախոսը հենվում է ուսուցման գիտակցական-ճանաչողական սկզբունքների վրա՝ կարևորելով տերմինների ճանաչման հոգեբանական մեխանիզմները և մտավոր շրջանակների դերը քաղաքագիտական հասկացությունների ընկալման գործում: Առանցքային նշանակություն ունի ESP կարողունակության բազմաբաղադրիչ մոդելը, որն ընդգրկում է հաղորդակցական, միջմշակութային և մասնագիտական հմտությունները: Հատկանշական է բառապաշարի ընտրության սկզբունքների համակարգված քննությունը, որտեղ առանձնացվում են վիճակագրական, լեզվաբանական և մեթոդական չափանիշները, ինչպիսիք են գործածման հաճախականությունը, իմաստաբանական արժեքը և կապակցելիությունը: Հեղինակը կատարում է լեզվանյութի ինքնատիպ մեթոդական դասակարգում՝ բաժանելով այն ութ հիմնական խմբերի՝ հիմնվելով անգլերենի, հայերենի և ռուսերենի միջլեզվային փոխազդեցությունների ու յուրացման դժվարությունների վրա: Սույն գլխում մանրամասնվում են նաև բառապաշարի ուսուցման փուլերը և բառիմաստի բացահայտման լեզվական ու ոչ լեզվական եղանակները, ինչը թույլ է տալիս տեսական դրույթները վերածել գործնական մեթոդական գործիքակազմի:

Ատենախոսության երրորդ գլուխը՝ **«ՔԱՂԱՔԱԳԻՏԱԿԱՆ ԱՆԳԼԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄՇԱԿՈՒՄ. ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՈՒՄ ԵՎ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ»** վերտառությամբ, նվիրված է հեղինակի կողմից մշակված մեթոդական համակարգի գործնական ներդրմանը և դրա արդյունավետության գիտական հիմնավորմանը, առանձնանում է ավանդական և ժամանակակից մեթոդների նպատակային համադրությամբ: Փորձարարական հետազոտությունը, որն ընդգրկել է 164 ուսանող ՀՀ երեք առաջատար բուհերից, ապացուցում է, որ տեսողական օժանդակ նյութերի և ժամանակակից թվային հարթակների (ինչպիսիք են՝ Wordwall-ը, Kahoot-ը, Miro-ն և այլն) կիրառումը ստեղծում է որակապես նոր դինամիկ ուսումնական միջավայր: Հեղինակի առաջարկած ուսուցողական պաստառներն օգնում են ուսանողներին տեսանելի դարձնել քաղաքական երևույթների միջև առկա տրամաբանական կապերը՝ զուգահեռաբար

զարգացնելով նրանց քննական և ստեղծագործական մտածողությունը: Մեթոդական համակարգի կենսունակությունն առավել ընդգծվում է թիրախային աշխատանքային թերթիկների միջոցով, որտեղ մասնագիտական բառապաշարը ներկայացվում է իրական հաղորդակցական իրավիճակներում: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս սովորողներին ոչ միայն յուրացնել տերմինաբանությունը, այլև կիրառել այն քաղաքագիտական խոսույթին բնորոշ ռազմավարությունների համատեքստում: Մ. Փիլիպոսյանի կողմից առաջարկված ուսուցողական պաստառների, աշխատանքային թերթիկների և թվային արդի հարթակների համակցված կիրառումը հանդիսանում է մասնագիտական լեզվանյութի յուրացման արդյունավետ գործիքակազմ, որը քաղաքագիտական անգլերենի դասավանդման գործընթացը դարձնում է առավել թիրախային և դինամիկ: Նման համակարգված մոտեցումը ոչ միայն ապահովում է նյութի մատչելի և կառուցվածքային մատուցումը, այլև խթանում է սովորողների ակտիվ ներգրավվածությունը՝ տեսական դրույթները վերածելով կայուն կիրառական հմտությունների:

Նախափորձարարական և հետփորձարարական թեստերի ցուցանիշների համեմատական վերլուծությունը փաստացի ապացուցում է քաղաքագիտական անգլերենի ուսուցման համար մշակված մեթոդական համակարգի արդյունավետությունը:

Հետազոտությունն ավարտվում է եզրակացություններով, որոնք ատենախոսության առաջադիր խնդիրներից բխող հիմնավորումներն են:

Դրական գնահատելով Մ. Փիլիպոսյանի աշխատանքը՝ կցանկանայինք նշել որոշ դիտարկումներ.

1. Ցանկալի կլիներ հստակեցնել օգտագործված տերմինաբանությունը և ապահովել հիմնական հասկացությունների միասնական կիրառումը ամբողջ աշխատանքի ընթացքում՝ խուսափելով հնարավոր բազմիմաստություններից և ոճական անհամապատասխանություններից, ինչը կուժեղացներ աշխատանքի գիտական և գործնական արժեքը:

2. Աշխատանքը կարող էր ավելի շահել, եթե ավելացվեր համեմատական վերլուծություն ավանդական և ճանաչողական-հաղորդակցական մոտեցումների միջև՝ ընդգծելով վերջինիս առավելությունները քաղաքագիտական մասնագիտական բառապաշարի ուսուցման համատեքստում:
3. Կարելի էր ընդլայնել օգտագործված աղբյուրների շրջանակը՝ ներառելով ավելի նոր միջազգային հետազոտություններ և մեթոդական հրապարակումներ, ինչը կնպաստեր աշխատանքի տեսական հենքի ամրապնդմանը և արդիականությանը:
4. Գիտափորձի արդյունքները վերլուծելիս հեղինակն ավելի հանգամանորեն կարող էր դասակարգել ուսանողների կողմից թույլ տրված լեզվական սխալները:
5. Աշխատանքում առկա են որոշ տեխնիկական վրիպակներ և սպրդումներ, որոնք վերանայման կարիք են զգում:

Կարելի է նշել, որ ատենախոսն իրականացրել է համապարփակ հետազոտություն՝ ներառելով թե՛ գրականության վերլուծություն, թե՛ փորձարարական տվյալների հավաքագրում և վերլուծություն, ինչը բարձրացնում է աշխատանքի գիտական արժեքը և կիրառական նշանակությունը:

Ընդհանուր առմամբ ատենախոսությունը համապատասխանում է գիտական աշխատանքի պահանջներին, ունի տեսական և կիրառական արժեք, և կարող է օգտակար լինել ինչպես ուսանողների ու դասախոսների, այնպես էլ քաղաքագիտական ոլորտի մասնագետների համար:

Ներկայացված ատենախոսությունը կարելի է գնահատել որպես գիտականորեն հիմնավորված և գործնական կիրառման համար կարևոր ուսումնասիրություն: Դրական է նաև այն, որ հրատարակված հոդվածները և սեղմագիրը համապատասխանում են ատենախոսության բովանդակությանը:

Եզրակացություն

Դրական գնահատելով սույն աշխատանքը՝ կարող ենք վստահորեն պնդել, որ Մարինե Աղվանի Փիլիպոսյանի՝ **«Քաղաքագիտական մասնագիտական լեզվի ուսուցման մեթոդական համակարգի արդյունավետության գիտագործնական հիմքերը (անգլերեն նյութի հիման վրա)»** խորագրով ատենախոսությունը ամբողջական, գիտական ու լեզվական բարձր մակարդակով իրականացված հետազոտություն է: Այն լիովին համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, բավարարում է ԲԿԳԿ-ի կողմից մանկավարժական գիտությունների թեկնածուի /ԺԳ. 00. 02 թվանիշով/ գիտական աստիճանին ներկայացվող ժամանակակից պահանջները, որն էլ հիմք է տալիս միջնորդելու ՀՊՄՀ-ում գործող՝ գիտական աստիճաններ շնորհող 020 մասնագիտական խորհրդի առջև նրա հեղինակին շնորհելու իր հայցած մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝
մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
Մետաքսյան Ազատի Դարաբյան

Հաստատում եմ պաշտոնական ընդդիմախոս մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Մետաքսյա Ազատի Դարաբյանի ստորագրությունը
Խ. Աբովյանի անվան Հայկական
պետական մանկավարժական
համալսարանի գիտքարտուղար
մ.գ.թ., դոցենտ, Հակոբ Վասիլիկի Թադևոսյան
01.06.2026թ.